ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարուքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» (Պ-186-21.12.2012-ԳԿ-010/0, Պ-186[1]-21.12.2012-ԳԿ-010/0) Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

Համաձայն «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «հանրապետական և տեղական նշանակության հուշարձանների տեղափոխումը, հանրապետական նշանակության հուշարձանների փոփոխումը կարող են կատարվել միայն բացառիկ դեպքերում»: Ներկայացված նախագծի 1-ին

հոդվածով նախատեսվում է հուշարձանի տեղափոխման կամ փոփոխման միայն մեկ բացառիկ դեպք՝ հուշարձանի ոչնչացման սպառնալիքը: Սակայն գործնականում լինում են հուշարձանների տեղափոխման կամ փոփոխման այլ դեպքեր, օրինակ՝ հուշարձանի հանրահռչակման, գիտական ուսումնասիրման, վերականգնման, պահպանության նպատակներով տեղափոխումը, որոնք ներկայացված նախագծով նախատեսված բացառիկ դեպքից պակաս կարևոր չեն:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է՝ մինչև հուշարձանի տեղափոխումը կամ փոփոխումը կազմակերպել տեղական հանրաքվե: Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ, գործող օրենքի 8-րդ հոդվածի համաձայն, հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում պետական քաղաքականության իրականացումն ապահովում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ 21-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ հանրապետական և տեղական նշանակության հուշարձանների տեղափոխումը, հանրապետական նշանակության հուշարձանների փոփոխումը կարող են կատարվել միայն բացառիկ դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության թույլտվությամբ, իսկ տեղական նշանակության հուշարձանների փոփոխումը՝ պետական կառավարման տարածքային մարմինների թույլտվությամբ: Վերջինս հնարավորություն է տալիս համապատասխան մարմնին գործելու ավելի ճկուն, անհրաժեշտության դեպքում խնդիրների լուծման համար ընդունելու օպերատիվ որոշումներ և իրականացնելու հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում պետական քաղաքականությունը:

Միևնույն ժամանակ, համաձայն գործող օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի՝ հուշարձանների տեղափոխման և փոփոխման թույլտվություն տրվում է միայն լիազորված մարմնի եզրակացության հիման վրա: Հուշարձանների տեղափոխման և փոփոխման հետ կապված հարցերը մասնագիտական բնույթ ունեն և պետք է որոշվեն միայն մասնագիտական եզրակացության հիման վրա:

Հարկ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ թե՛ հանրապետական, թե՛ տեղական նշանակության հուշարձանների զգալի մասը հանդիսանում է պետական սեփականություն, որի տնօրինման իրավունքը վերապահված է Հայաստանի Հանրապետության կառավարությանը, իսկ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 107-րդ հոդվածի համաձայն համայնքի անդամները կարող են ուղղակիորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝ տեղական հանրաքվեով համայնքային նշանակության հարցերը լուծելու միջոցով: Մինչդեռ ներկայացված նախագծերով նախատեսվում է տեղական հանրաքվեի միջոցով լուծում տալ բոլոր հուշարձանների տեղափոխման և փոփոխման վերաբերյալ որոշումների ընդունմանը՝ անկախ սեփականության իրավունքից:

3. Ներկայացված օրենքների նախագծերի փաթեթում առկա են մի շարք անհամապատասխանություններ և հակասություններ: Այսպես՝

1) ներկայացված՝ «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսվում է լրացում, ըստ որի տեղական հանրաքվեներ չեն կարող անցկացվել հանրապետական կամ տեղական նշանակության հուշարձանների փոփոխմանը կամ տեղափոխմանը վերաբերող հարցերով, մինչդեռ գործող օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի «ը» ենթակետով արդեն իսկ սահմանվում է, որ տեղական հանրաքվեի չեն կարող դրվել պատմության, մշակույթի, բնության հուշարձաններին և արգելանոցներին վնաս հասցնելուն վերաբերող հարցերը:

Նույն նախագծի 2-րդ հոդվածը հակասություն է առաջացնում «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի հետ, որը սահմանազատում է համայնքի ղեկավարի լիազորությունները պատմամշակութային ու բնապատմական հուշարձանների բնագավառի վերաբերյալ.

2) «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում և «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածում նշված է, որ հանրապետական կամ տեղական նշանակության հուշարձանները փոփոխելուց կամ տեղափոխելուց առաջ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կազմակերպում է տեղական հանրաքվե, իսկ «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածով սահմանվում է, որ հանրապետական կամ տեղական նշանակության հուշարձանների փոփոխմանը կամ տեղափոխմանը վերաբերող հարցերը չեն կարող դրվել տեղական հանրաքվեի.

3) «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածը չի համապատասխանում գործող օրենքի 11-րդ հոդվածի 1.1-ին մասի դրույթներին:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքների նախագծերի փաթեթի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի /այսուհետ՝ նախագծեր/ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն,**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ **չեզոք ազդեցություն:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» և « Տեղական հանրաքվեի մասին » ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» և «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) կարգավորվում են հանրապետական և տեղական նշանակության հուշարձանների տեղափոխման, փոփոխման հետ կապված իրավահարաբերությունները:

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծերի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է հանրապետական և տեղական նշանակության հուշարձանների տեղափոխման, ինչպես նաև հանրապետական նշանակության հուշարձանների փոփոխման հետ կապված իրավահարաբերություններին* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում***:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման դեպքում

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների (այսուհետ՝օրենքներ) նախագծերի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքները բնապահպանության ոլորտին չեն առնչվում և այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՆԱԽԱԳԻԾ
Պ-186-21.12.2012-ԳԿ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թ. նոյեմբերի 11-ի ՀՕ-261 օրենքի 21-րդ հոդվածում՝

1) երկրորդ պարբերությունից հետո լրացնել շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ նոր երրորդ և չորրորդ պարբերություններով.

«Սույն հոդվածի իմաստով բացառիկ դեպք է համարվում հուշարձանի ոչնչացման սպառնալիքը:

Հանրապետական կամ տեղական նշանակության հուշարձանները փոփոխելուց կամ տեղափոխելուց առաջ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կազմակերպում է տեղական հանրաքվե: Հանրապետական կամ տեղական նշանակության հուշարձանների փոքր բեկորների տեղափոխումից կամ փոփոխումից առաջ Հանրապետության կառավարությունը կազմակերպում է հանրային լսումներ՝ ներգրավելով անկախ մասնագետների, շահագրգիռ անձանց և հուշարձանի գտնվելու վայրի համայնքի բնակիչներին:»

2) երրորդ պարբերությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Հուշարձանների տեղափոխման և փոփոխման թույլտվություն տրվում է միայն լիազորված մարմնի եզրակացության և հանրաքվեի արդյունքների հիման վրա:»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ
Պ-186[1]-21.12.2012-ԳԿ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 6-ի ՀՕ-304 օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր (թ) կետով.

«թ) Հանրապետական կամ տեղական նշանակության հուշարձանները փոփոխելու կամ տեղափոխելու հարցերով»:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Համայնքները միացնելու կամ առանձնացնելու հարցով Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալուց առաջ, ինչպես նաև հանրապետական կամ տեղական նշանակության հուշարձանները փոփոխելու կամ տեղափոխելու հարցերով համապատասխան համայնքներում նշանակում է տեղական հանրաքվեներ:»

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ «ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

1.1 Իրավական ակտի անհրաժեշտությունը. «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման նպատակն է կարգավորել ոլորտում առկա բացը, այն է՝ հանրապետական և տեղական նշանակության հուշարձանների տեղափոխման, հանրապետական նշանակության հուշարձանների փոփոխման բացառիկ դեպքի, ինչպես նաև այդ հուշարձանները տեղափոխելու կամ փոփոխելու դեպքում հուշարձանի՝ իր սկզբնական գտնվելու վայրի համայնքի բնակչության կամքը հաշվի առնելու՝ լիազոր մարմնի պարտականության սահմանման բացակայությունը:

1.2 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2012 թվականի սեպտեմբերի 13-ին ընդունել է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տեղափոխման մասին» թիվ 1169-Ա որոշումը: Ըստ այդ որոշման՝ հանրապետության տարբեր մարզերից Երևան պետք է տեղափոխվեն պատմության և մշակույթի 63 անշարժ հուշարձաններ: Թվով 51 հուշարձաններ արդեն իսկ տեղափոխվել են Երևան:

Կառավարության նշված որոշումը գիտական շրջանակներում, մասնագետների և քաղաքացիների շրջանում առաջացրել է լուրջ դժգոհություն գրեթե բոլոր այն տեղերում, որտեղից պետք է տեղափոխվեին կամ արդեն տեղափոխվել են պատմամշակույթային հուշարձանները:

Մշակույթի ոլորտի պատասխանատուները պնդում են, որ նախ, դրանք հուշարձաններ չեն, այլ «բեկորներ» և երկրորդ, որ դրանք տեղափոխվել են վերանորոգման և վերականգնման համար: Օրեր առաջ կազմակերպվել էր մամուլի ասուլիս, որի ժամանակ տեղեկացանք, որ խոսքը բեկորների մասին չի գնում, այլ ամբողջական հուշարձանների, որանց վրա որևէ նորոգման կարիք իրականում չկա:

Փաստ է նաև այն, որ պատմամշակութային հուշարձանն էապես կորցնում է իր գիտական, մշակութային և հոգևոր նշանակությունը, երբ իր գտնվելու վայրից տեղափոխվում է այլ վայր:

1.3 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Կառավարության վերոնշյալ որոշումը ոչ մի կերպ չի նպաստում տարածքային համաչափ զարգացմանը, Երևան քաղաքի բեռնաթափմանը, ինչպես նաև Երևանի համեմատ մարզերի տնտեսական ակտիվության առաջանցիկ աճի ապահովմանը, քանի որ կառավարության նախաձեռնությամբ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տեղափոխման դեպքում կնվազի տուրիստների հոսքը դեպի մարզեր, որոնք այցելում էին պատմական վայրեր՝ նպատակ ունենալով տեսնել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները իրենց գտնվելու պատմական վայրերում: Մյուս կողմից, մարդիկ, ովքեր ավանդույթի ուժով ուխտի են գնացել մարզերում գտնվող պատմական վայրեր, այլևս չեն կարող գնալ այնտեղ, որտեղից բացակայում են ուխտատեղի հիմնական սրբությունները:

Սույն նախագծով սահմանվում է հանրապետական և տեղական նշանակության հուշարձանների տեղափոխման, հանրապետական նշանակության հուշարձանների փոփոխման բացառիկ դեպքերի հասկացությունը և նախատեսվում է լիազոր մարմնի՝ հուշարձանները տեղափոխելու կամ դրանք փոփոխելու դեպքում տեղական հանրաքվե անցկացնելու, իսկ այդ հուշարձանների համեմատաբար փոքր բեկորների տեղափոխման կամ փոփոխման դեպքում՝ հանրային լսումներ կազմակերպելու պարտականությունը:

2. Կարգավորման առարկան. Նախագծի կարգավորման առարկան են հանդիսանում հանրապետական և տեղական նշանակության հուշարձանների տեղափոխման, հանրապետական նշանակության հուշարձանների փոփոխման հետ կապված իրավահարաբերությունները:

3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը. Նախագծի ընդունման արդյունքում գործելու է լիազոր մարմնի կողմից հանրապետական և տեղական նշանակության հուշարձանները տեղափոխելու կամ դրանք փոփոխելու ժամանակ հասարակական կարծիքը հաշվի առնելու մեխանիզմ, ինչի արդյունքում կբացառվեն հետագա տարընթերցումները, անհամաձայնությունները և բախումները: